Շվանիձոր

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 97 կմ,
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 19 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 640 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,
Գտնվում է Արաքսի գետի ձախ ափին և համարվում է Մեղրու տարածաշրջանի ամենաբարեկարգ գյուղերից մեկը: Շվանիձորում կանգուն է 17-րդ դարում կառուցված ջրանցույցը: Այն շարված է սրբատաշ բազալտե քարերից՝ կրաշաղախով, համարվում է միջնադարյան Հայաստանի այդ տիպի կառույցներից ամենակարևորը:
Շվանիձորի տարածքում են գտնվուն նաև «Գոմևրանց», «Վերին շեն», «Թեղուտ» (17-18 դդ), «Շվանիձոր» (16-20 դդ) գյուղատեղիները, խաչքարերով գերեզմանոցը (17-18 դդ) և հին կամուրջը (17-18 դդ):
Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 5184 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2447 հա, որից՝
- վարելահող՝ 102 հա, բազմամյա տնկարկ՝ 24 հա, խոտհարք՝ 1 հա, արոտ՝ 509 հա, այլ հողատեսք՝1812 հա
- բնակավայրերի հողեր՝ 65 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 20 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2614 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 14 հա, որից անտառածածկ՝ 14 հա
- ջրային հողեր՝ 19 հա